<<ԵՐԵՎԱՆԻ Հ. 102 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ԱՐԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ - <<ՊԱՏԱՆԻ ԲՆԱՍԵՐ>>

ԾՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿ՝ Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

«Պատանի բնասեր» խմբակի ուսումնական ծրագիր

(68 ժամ, որից 4-ը պահուստային են և նախատեսված են էքսկուրսիաների և գործնական պարապմունքների համար)

Կենսաբանության ուսուցիչ՝ Ա. Թադևոսյան

Հանրակրթական դպրոցում ուսուցման գլխավոր հարցերից մեկը բնագիտական առարկաները բոլոր աշակերտների համար հետաքրքիր և պահանջարկված դարձնելն է: Բնապահպանական հիմնախնդիրների ուղղությամբ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ է օգտագործել բնության մասին գիտության լայն համալիր: Այս դասընթացը նպատակ է հետապնդում աշակերտների մեջ դաստիարակել էկոլոգիական գրագիտությամբ օժտված անձանց, ամբողջացնել սովորողների գիտելիքները մարդու և բնության փոխհարաբերությունների վերաբերյալ, նրանց մոտ ձևավորել պատկերացումներ կենսաբանական ռեսուրսների, կենսաբազմազանության վրա ազդող գործոնների վերաբերյալ: Կարևոր խնդիր է սովորողների մոտ զարգացնել կենսաբազմազանության վրա մարդու գործունեության վնասակար հետևանքները գնահատելու, կանխելու և վերացնելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, ինչպես նաև զարգացնել ՀՀ-ում բնապահպանական հիմնախնդիրների գնահատմանը և վտանգված էկոհամակարգերի վերականգնմանն ուղղված միջոցառումների պլանավորման և իրականացման հմտություններ, նպաստել բնապահպանական հիմնախնդիրները գիտակցող, պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

Որպես խմբակի դասընթացի վերջնարդյունք ակնկալվում է, որ սովորողները կկարողանան բնութագրել մարդու և բնության փոխադարձ կապը, կարժևորեն կենսաբանական հարստությունները, կգնահատեն կենսաբազմազանությանը սպառնացող վտանգները, մարդու ազդեցությունը էկոհամակարգերի կայունության վրա և կքննարկեն էկոհամակարգային ծառայությունների դերը: Կարևոր է, որ սովորողները կանխատեսեն անտառների հատման, բնակատեղերի ոչնչացման, ջրային և ցամաքային էկոհամակարգերի աղտոտման, թունաքիմիկատների անվերահսկելի օգտագործման հետևանքները, առաջարկեն կենսաբազմազանությանը սպառնացող վտանգների նվազեցման և բնության պահպանությանն ուղղված միջոցառումներ, կայուն զարգացում, էկոլոգիական հետք: Կենսաբազմազանության պահպանության գործում կարևորեն հատուկ պահպանվող տարածքների դերը՝ նշելով վտանգված տեսակները: Ճանաչեն Հայաստանի և Միջազգային Կարմիր գրքերում ընդգրկված առավել հայտնի տեսակները և նպաստեն բնապահպանության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի, վարքագծի և արժեքային համակարգի զարգացմանը:

Թեմա 1. Մարդ և բնություն փոխհարբերություններ (5 ժամ)

1	Մարդը և բնությունը
2	Մարդկային հասարակության ներգործությունը բնության վրա
3	Տնտեսական առաջընթացը և շրջակա միջավայրի քայքայումը
4	Էկոլոգիական հիմնախնդիրներ, դրանց բնույթը
5	Մարդկության թվաքանակի գերաճի խնդիրը

Թեմա 2. Բնությունը եզակի արժեք է (4 ժամ)

1	Բնության վերաբերյալ մարդու մտածելակերպի պատմական էվոլյուցիան
2	Բնության դերը մարդու կյանքում
3	Բնական պաշարները և դրանց դասակարգումը
4	Բնական պաշարների արդյունավետ օգտագործման սկզբունքները

Թեմա 3 Բնահողեր (9 ժամ)

1	Բնահող, անհրաժեշտությունը
2	Հողի բաղադրիչները, հողի կազմավորումը
3	Հողային ծածկույթի գոյացումը
4	Հողի հատկությունները
5	Բնահողերի դասակարգումը
6	Էրոզիան՝ կյանքի ոչնչացման պատճառ
7	Էրոզիայի վրա ազդող գործոնները
8	Էրոզիայի կանխարգելումը
9	Քիմիական պարարտանյութեր: Պեստիցիդներ

Թեմա 4 Անտառներ (6 ժամ)

1	Անտառների նշանակությունը
2	Անտառների տեսակները
3	Անտառները՝ որպես էկոհամակարգ
4	Անտառազրկում,անտառազրկման հետևանքները
5	Անապատացում
6	ՀՀ անտառների վիճակը

Թեմա 5 Մթնոլորտի հիմնախնդիրներ (7 ժամ)

1	Օդային ավազնի կամ մթնոլորտային օդի աղտոտման հիմնախնդիրները
2	Երկիր մոլորակի մթնոլորտի կառուցվածքը
3	Մթնոլորտային օդի աղտոտումը
4	Օդի աղտոտման աղբյուրները
5	Կլիմայի փոփոխությունը
6	Օզոնային շերտի հիմնախնդիրը
7	ՀՀ օդային ավազանի հիմնախնդիրները

Թեմա 6 Ջուր . Բնական ամենակարևոր հարստությունը (11 ժամ)

1	Ջրի նշանակությունը բնության մեջ և մարդու կյանքում
2	Երկրագնդի ջրային պաշարները և նրանց տեղաբաշխումը
3	Ջրի շրջապտույտը բնության մեջ
4	Ջրի պահանջարկը տնտեսավարման տարբեր ոլորտներում և դրա բավարարումը
5	Ջուրը մեր կենցաղում
6	Ջրի աղտոտումը
7	Ստորերկրյա ջրերի աղտոտումը
8	Ջրի մաքրման համակարգերը
9	Կեղտաջրերի մաքրման համակարգը
10	Հայաստանի ջրային պաշարները
11	Սևանա լճի պահպանության հիմնախնդիր

Թեմա 7 Թափոններ, աղբի հիմնախնդիր (5 ժամ)

1	Կոշտ թափոններ, աղբի հիմնախնդիր
2	Ինչպես վարվել աղբի սարերի հետ
3	Թափոնների նվազեցումը
4	Թունավոր թափոններ
5	Կոմպոստի պատրաստում

Թեմա 8 Էներգիա (6 ժամ)

1	Էներգիայի աղբյուրներ, էներգակիրներ
2	Ածուխ, արդյունահանումը, պաշարները, սպառումը
3	Նավթ, արդյունահանումը,պաշարները, սպառումը
4	Բնական գազ և մեթան, պաշարները, սպառումը
5	Էլեկտրականություն
6	Էներգիայի այլընտրանքային աղբյուրներ

Թեմա 9 Կենսաբազմազանություն (11 ժամ)

1	Կենսաբազմազանութուն, պահպանման անհրաժեշտությունը
2	Կարմիր գիրք
3	Բնության հատուկ պահպանվող տարածքներ
4	ՀՀ Պետական արգելոցները
5	ՀՀ ազգային պարկերը
6	ՀՀ Պետական արգելավայրերը
7	Բնության հուշարձաններ
8	Բուսական ռեսուրսների պահպանումն ու վերականգնումը
9	Կենդանական ռեսուրսների պահպանումն ու վերականգնումը
10	Բնօգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները ՀՀ-ում
11	ՀՀ բնապահպանական օրենսդրություն